ՆՏԳՍ համակարգում փոփոխություններ կատարելու, գազասարքերի փոխարինման, վերատեղադրման կամ դրանց անսարքությունների վերացման համար դիմե՛ք Մատակարարին կամ Սպասարկողին:

Չի՛ թույլատրվում.

- անջատել գազասպառման անվտանգության ձայնազդանշանային ավտոմատ սարքն էլեկտրանուցումից (ազդանշանիչի էլեկտրաէներգիայի ծախսը տարեկան կազմում է ընդամենը 8,64 կՎտ շուրջ 400 դրամ),
- ինքնակամ փոխարինել, նորոգել և տեղափոխել գազասարքերը,

- գազօջախներն օգտագործել ջեռուցման նպատակով, դրանց վրա տեղադրել մեծ մակերեսով կաթսա կամ թիթեղ՝ առանց հավելյալ տակդիրի, քանի որ սահմանափակվում է այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքը, զարգանում է թերայրում (շմու գազի առաջացում),
- օդատար ուղիներին միացնել օդաքարշ կամ ծխատար, դրանք փակել լաթով կամ այլ առարկաներով,
- փակել օդափոխության ու գազի այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքի նպատակով նախատեսված դրան տակի բացվածքը,
- սահմանափակել ծխահեռացման ուղիների անցողունակությունը (քարշը), օգտագործել ծալքավոր նրբաթիթեղյա խողովակներ և այլ խոչընդոտներ:

Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե.

- գազասարքն անսարք է, կամ գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրագույն (մրոտ) բոցով կամ խզվում (կտրվում) է այրիչից,
- գազասպառնան անվտանգության ձայնագղանչանային ավտոմատ համակարգը չի աշխատում կամ անսարք է,
- ծխաօդատար համակարգում բացակայում է քարշը կամ առաջացել է ետքարշ:

Զայնային ազդանշանի միացման դեպքում անհրաժեշտ է անհապաղ օդափոխել շինությունը և զանգահարել 1-04 հեռախոսահամարին:

Խորհուրդ չի տրվում.

- օգտվել ծխատարով ջրատաքացուցիչներից և ջեռուցման սարքերից՝

թանձր մառախուղի, ուժեղ քամիների և տարվա առավել շոգ եղանակների ժամանակ,

- գազօջախները և ծխատարով գազասարքերն օգտագործել օդորակիչների (կոնդիցիոներ) հետ համատեղ:

Անհրաժեշտ է.

- ծխատարով ջրատաքացուցիչները և ջեռուցման սարքերը միացնելուց առաջ և միացնելուց մինչև 5 րոպե հետո լուցկու բոցի մոտեցման եղանակով ստուգել ծխատար ուղիներում քարշի առկայությունը,
- առատ ձյուն տեղալու և ուժեղ քամիների դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը և մաքրել գլխանասը:

Արգելվում է.

- Անջատել անվտանգության աղդանշանային համակարգը:
- Կատարել գազահամակարգի ինքնակամ փոփոխություններ:**

Գազասպառնան անվտանգության ձայնագղանչանային սարքի ազդանշանի բնակարանում գազի հոտ զգալու, արտահոսքի, գազասպառնան հետ կապված բնակիչների առողջական վիճակի վատթարացման (թունավորում, հրդեհ և այլն) կասկածների կամ այլ վթարային իրավիճակներում.

- անհապաղ զանգահարել շուրջօրյա գործող գազի վթարային ծառայություն 1-04, կամ ԱԻՆ 9-11 հեռախոսահամարներով,
- չծխել, չօգտվել բաց կրակից կամ կայծ առաջացնող որևէ միջոցից, չմիացնել և չանջատել էլեկտրասարքավորումները,



- Փակել գազասարքերի և սնող գազախողովակների խցանային փականները, բացել դռները և պատուիանները, օդափոխել շինությունը,
- զգուշացնել ընտանիքի անդամներին և հարևաններին, նրանց հանել անվտանգ և չգազավորված տարածք:

Գազի մուտքը բնակարան անվտանգության ավտոմատ կափույրի միջոցով

փակելու դեպքում արգելվում է ինքնակամ գործարկել այն՝ առանց վերացնելու վթարային ազդանշանի պատճառը:



Զեր բնակարանի գազամատակարարումը կդադարեցվի, եթե.

- Խոչընդոտեք ներտնային գազապառման համակարգի տեխնիկական սպասարկման, անսարք գազասարքի անջատման, խցանային փականի խցափակման և կնքման աշխատանքներին,
- պոկեք խցափակման կնիքը և ինքնակամ միացնեք գազասարքը:

Ներտնային գազասպառման համակարգի պատշաճ վիճակի պահպանման համար պատասխանատվություն կրում է բաժանորդը:

**Հիշե՛ք, որ
Ըմոլ գազի 0,4-0,5 % առկայությունը շինությունում
10-15 րոպեի ընթացքում մահացու է:**

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ, ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Վիվասել-ՄՏՍ ընկերությունը լավագույն օրինակ է բիզնեսի առաքելության և հասարակության հետ հարաբերությունների:

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը մշտապես մոտ է իր հաճախորդներին շնորհիվ գործող սպասարկման կենտրոնների:

Ընկերությունը բաժանորդներին ապահովում է ձայնային և տվյալների փոխանցման բարձրորակ ու նորարարական ծառայություններով, նա Հայաստանի անգերազանցելի առաջատարն է բջջային ցանցի ծածկութով:

Գործունեության առաջին օրվանից սոցիալական ներդրումներ են կատարվել հետևյալ ոլորտներում՝ կրթություն, մշակույթ, շրջակա միջավայրի պաշտպանություն, առողջապահություն, համայնքային գարգացում, սպորտի և առողջ ապրելակերպի խրախուսում և այլն:

Վիվասել-ՄՏՍ-ն առաջնորդվում է ISO 26000 (Սոցիալական պատասխանատվության միջազգային ստանդարտ) և ISO/IEC 27001:2013 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) ստանդարտներով:



ՌԱՏՁ ՅԻՐԻԿՅԱՆ

Վիվասել-ՄՏՍ-ի Գլխավոր տնօրին



ԱՇՏԱՐԱԿ-ԿԱԹ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ավելի քան 2 տասնամյակ «Աշտարակ-Կաթ» ընկերությունը շուկայում ներկայանում է ավանդական և յուրահատուկ բաղադրատոմսերով արտադրվող որակյալ ու բազմատեսակ կարնամբերքով:

Ընկերությունն ազատում է գյուղացուն կաթի պահպանման, տեղափոխման և իրացման խնդիրներից: Նոր կրած կաթը ժամանակակից լաբորատոր սարքավորումների միջոցով թեսթավորվում է և սառեցվում, ապա հատուկ փոխադրամիջոցներով տեղափոխվում գործարան: Այստեղ խիստ կարևորվում է տեխնիկական միջոցների և տեխնոլոգիական պրոցեսների պարբերաբար արդիականացումը:

«Աշտարակ-Կաթ» ապրանքանիշով ողջ արտադրանքը (անարատ կաթ, թթվասեր, մածուն, քամած մածուն, յոգուրտ, կաթնաշոռ, կարագ, հալած պանիր, ջնարակված պանիրիկ, կեֆիր, թան և ավանդական հայկական պանիրների մի քանի տեսակներ՝ Լոռի, Չանախ, Եղիգնաձոր, Սուլուգունի, Չեչիլ, Ապխտած, պաղպաղակների և ընդամենը կենդանի յոգուրտների տեսականի, բնական յոգուրտ, հալած պանիր տեսականի, «Մոջո» ընդամենը յոգուրտները, կաթնաշոռային ջնարակված պանիրիկներ, «Յոգու-Սոգու» մանկական յոգուրտների շարքը և այլն) համապատասխանում է միջազգային գործադրություններին:

«Աշտարակ-Կաթ» արտադրում է նաև «Կովիկ» ապրանքանիշով կաթնամբերքի տեսականին, որն ընդգրկում է կաթ, թթվասեր, կաթնաշոռ, ռուսական կեֆիր ու թան:


ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Առդելիկատես» ընկերությունը, որ հայտնի է մսամթերքի արտադրությամբ, մշտապես վայելում է սպառողի վստահությունը: Պարբերաբար ավելանում են ընկերության արտադրանքի նկատմամբ ուշադրությունն ու պահանջարկը:

«Առդելիկատես» ապրանքանիշով մսամթերքն իրացվում է և հանրապետությունում, և դրա սահմաններից դուրս:

Գործարկվող սարքավորումները, փաթեթավորման պարագաները և հավելանյութերը հիմնականում ներմուծվում են իտալական, գերմանական, շվեյցարական ընկերություններից: Ընկերության արտադրամասերն աչքի են ընկնում սանհիտարահիգինիկ պահանջների բավարարմամբ, աշխատակիցները պարտադիր հագնում են աշխատանքային արտահագուստ:

«Առդելիկատես» ապրանքանիշով տեսականին ներառում է հոլում, եփած, ապիստած երշիկների մոտ 80, մսային կիսապատրաստվածքների մոտ 30 տեսակ, ինչպես նաև բաստուրմա, սուրճություն:



ԹԱՄԱՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայրենական շուկայում վաղուց հաստատուն տեղ ունի «Թամարա» ընկերությունը, որի արտադրած կաթնամթերքն առողջության համար անվտանգ է և որակյալ: Արտադրությունն իրականացվում է ավանդական տեխնոլոգիաների կիրառմամբ, մշտապես արդիականացվում են տեխնիկական միջոցներով ու տեխնոլոգիական պրոցեսներով: «Թամարա» ՍՊԸ-ն փաթեթավորման պարագաները և փաթեթավորող սարքավորումները հիմնականում ներկրում է Ավստրիայից և Իտալիայից՝ Technogel, Seda, Chesarina Food, Cold Car ընկերություններից: Արտադրության ընթացքում նվազագույնի է հասցված մարդու և մթերքի շփումը:



«Թամարա» ապրանքանիշով սարքավորումները հիմնականում ներկրում է Ավստրիայից և Իտալիայից՝ Technogel, Seda, Chesarina Food, Cold Car ընկերություններից: Արտադրության ընթացքում նվազագույնի է հասցված մարդու և մթերքի շփումը:

«Թամարա» ապրանքանիշով տեսականին համեղ է, միշտ թարմ: Գործարանում արտադրվում են շուրջ 90 տեսակ պաղպաղակ, պաղպաղակից տորթեր, հրուշակեղենի 20 տեսակ, 15 անուն կաթնամթերք, 5 տեսակ պանիր, նաև նորագույն սարքավորումներով ստացվող չոր

կաթ: Հրուշակեղենի արտադրության մեջ օգտագործվում է տեղում պատրաստված կարագը:

«Թամարա» ընկերության պաղպաղակներն արտահանվում են ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնություն:



ՍԵԼԵՆԱ ՍԵՐՎԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Սելենա Սերվիս» ընկերությունն առաջատարն է մաքրման և խնամքի ծառայությունների ոլորտում: Նա առաջնորդվում է գերմանական Der Blaue Engel և եվրոպական Ecolabel սերտիֆիկատների սկզբունքներով և գերժամանակակից լավագույն տեխնոլոգիաների շնորհիվ իրականացնում է անթերի և մանրակրկիտ մաքրման և խնամքի աշխատանքներ, նաև լվացքի ծառայություն հյուրանոցային պարագաների և չոր/խոնավ մաքրում անհատական հագուստների համար՝ առաջարկելով ընդհանուր, ստանդարտ և պրեմիում կարգի ծառայություններ:

«Սելենա Սերվիս» ընկերության մշտական պատվիրատունների ցանկում են Հայաստանի ամենահեղինակավոր և բարձրակարգ հյուրանոցներն ու ռեստորանները, այդ թվում՝ Մարիոթը, Թուֆենկյանը, Վիլա դե Լենդան, Եվոպան, Սալոնը, Շարլը, Լա Պիացցան, Ափ Լենին և շատ ուրիշներ:

Այսօր արդեն ընկերությունը հյուրանոցներին, ռեստորաններին և հիվանդանոցներին տրամադրում է սպիտակեղենի ու համազգեստի վարձույթի ծառայություն՝ ազատելով իր հաճախորդներին սպիտակեղենի մեջ ներդրումներ կատարելու և պահեստավորելու ծախսերից:

Գերժամանակակից լավագույն տեխնոլոգիաների շնորհիվ՝ «Սելենա Սերվիս» ընկերությունը ոչ միայն անթերի և մանրակրկիտ մաքրում է իրերը, այլև երկարաձգում է դրանց կյանքը:

ԲԱՐԻԿ 90 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «Դի Զի Միթ Ֆուլդ» ապրանքանիշ

«Բարիկ» մսամթերքի կոմբինատն իր գործունեության ողջ ընթացքում ունի մեկ գերնպատակ՝ սպառողներին ապահովել անվտանգ ու որակյալ արտադրանքով:

Արտադրությունն իրականացվում է Եվրոպական ստանդարտներին համապատասխանող գերմանական և շվեյցարական սարքավորումներով: Օգտագործվում են ներմուծված միս և այլ հոլմք: Գործարանի լաբորատորիայում մշտապես ստուգվում են ինչպես մսի, այնպես էլ պատրաստի արտադրանքի որակն ու անվտանգությունը:

Կոմբինատում արտադրվում են վետչինա, սարդելկա, նրբերշիկ, սուլցուխ, բաստուրմա, ապխտած, եփած, կիսապխտած, հոլմ ապխտած երշիկների տեսականի, ապխտած մսի տեսականի՝ ֆիլե, բութենինա, բեկոն, խոզի կողեր, կիսապատրաստվածքներ՝ քյաբարի ֆարշ, սառեցրած քյուֆթա, սառեցրած քյաբար, աղացած միս, ապխտած հավ, շերքի:



ՊՈՌԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

«Պոռշյանի կոնյակի գործարանում» մշտապես պահպանվում են գինեգործության և կոնյակագործության ավանդույթները: Գործարանը պարբերաբար զինվուն է բարձր տեխնոլոգիական սարքավորումներով: Մշտապես վերապատրաստվող փորձառու մասնագետների համար աշխատանքի բարձր որակն է, ներկայանալի տեսքը և հրաշալի համային հատկանիշները:

Գործարանի տեսականին ընդգրկում է.

- Արարատյան դաշտի խաղողի լավագույն տեսակներից պատրաստված 3-30 տարվա հնության կոնյակներ (Մանե, Պապ թագավոր, Շիրազ, Չարենց, Արծրունի, Արփինե, Վարդան Մամիկոնյան, Արմենուիի, Խենք և այլն),
- լիկորներ ու նորագույն տեխնոլոգիաներով արտադրված լավագույն մրգային նռան, սալորի, և հաղարջի, բալի, ծիրամի, սերվիլի, մոշիգինիներ:

Ընկերության արտադրանքը հաստատուն տեղ ունի հայկական և միջազգային շուկաներում: Արտադրանքն իրացվում է Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Չունաստանում, Լեհաստանում և այլուր:



ՎԵՐԴԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ և օգտագործելով արտերկրում վերապատրաստված մասնագետների փորձը՝ «Վերդե» մաքրման սրահը կատարում է քիմիական և բնական մաքրում: Սրահի ծառայությունների ցանկը ներառում է.

- մանկական և մեծերի հագուստի, սպիտակեղենի և ներքնաշղորերի լվացում,
- օսլայում, արդուկում,
- լաքաների մաքրում,
- հարսանյաց և երեկոյան զգեստների, վարագույնների մաքրում,
- կաշվի, թավշակաշվի, մորթե իրերի մաքրում և ներկում,
- գորգերի լվացում:

Այս ծառայություններից օգտվում են և անհատները, և կազմակերպությունները: Հագուստը պատվիրատուին վերադարձվում է նախընտրած տարբերակով՝ ծալած կամ հատուկ կախիչներով:

Սրահի պաշտոնական կայքում (www.verde.am) ներկայացված են բոլոր ծառայությունների գնացուցակը և մանրամասն նկարագրումը:

Առաջին անգամ Հայաստանում «Վերդե» ընկերությունը կիրառում է Green Earth մաքրման տեխնոլոգիան, որի ժամանակ օգտագործվում են շրջակա միջավայրը չաղտոտող, անվճական նյութեր:



ԼՈՒՄԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Թեև «Լումա» ընկերության արտադրական ծավալներն այնքան էլ մեծ չեն, բայց արտադրանքը կայուն տեղ ունի հայրենական շուկայում: Այստեղ արտադրվող մսամթերքն աչքի է ընկնում բարձր որակով ու ախտրժալի համային հատկանիշներով:

Ընկերությունում արտադրությունն իրականացվում է նորագույն տեխնոլոգիաներով սանհիտարական նորմերին համապատասխան պայմաններում: Արտադրատեսականին բազմազան է՝ հում, ապիտած, եփած երշիկների տեսականի, նրբերշիկ, սարդելկա, բաստուրմա, սուշուխ և այլն:

«Լումայի» արտադրանքը որակով, համով և մակնշնամբ բավարարում է օրենքով ներկայացվող պահանջները:



Pink Berry ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Pink Berry ընկերությունը 2013 թ.-ից արտադրում է առանձնահատուկ համով և որակական հատկանիշներով աչքի ընկնող փափուկ պաղպաղակ՝ արթնացնելով մանկության «լցոնվի» պաղպաղակի համը:

2017 թվականից Pink Berry-ն իր առջև նոր նպատակ է դրել դուրս գալ դեպի նոր շուկաներ և սկսել պաղպաղակի զանգվածային արտադրություն: Շնորհիվ նորագույն սարքավորումների՝ ընկերությունն արտադրում է միջազգային ստանդարտներին համապատասխան պաղպաղակներ:

Հայաստանյան շուկայում Pink Berry-ն համագործակցում է սիրված և ճանաչված բազմաթիվ սրճարանների հետ: Սպառողի կողմից սիրվել և լայն տարածում են գտել հատկապես Մայոնիները, Pinko-ն, Կոնը, Դոպինգը: Իսկ վերջերս ընկերությունը ներկայացրել է իր նոր պաղպաղակը՝ Դիլիմը, որն արդեն հասցրել է սիրվել պաղպաղակասերների կողմից:

Այսօր Pink Berry ընկերության արտադրանքը կարելի է գտնել Երևան քաղաքի ամեն մի անկյունում, ինչպես նաև Գյումրի, Էջմիածին և Վանաձոր քաղաքներում:



ԷԼԲԱՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



2010 թվականից գործունեություն ծավալող հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունն իրականացնում է գրեթե բոլոր տիպի ավտոմեքենաների համար կապա-րաթվային կուտակչային մարտկոցների արտադրություն: «Էլբատ» ապահովում է մարտկոցների երաշխի-քային և հետերաշխիքային սպասարկում:

«Էլբատ» ընկերությանը 2011 թ. Quality Austria ավստ-րիական կազմակերպության կողմից շնորհվել է Որակի կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային սերտիֆիկատ:

Այս ձեռնարկությունում գործում են ձուլման, մածու-կապատրաստման և մածուկապատման, էլեկտրոլիտի պատրաստման, ձևավորման և հավաքման, օդի ու ջրի գտնման և մշակման արտադրամասեր՝ հագեցած նորա-գույն տեխնոլոգիաներով: Որակի վերահսկման նպատա-կով գործում են ժամանակակից սարքավորումներով հա-գեցած քիմիական և էլեկտրամեխանիկական լաբորա-տորիաներ, որտեղ իրականացվում են համապատաս-խան փորձարկումներ:

ԳԱԼՍՏՅԱՆՆԵՐ ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԳԳԳ ապրանքանիշ

Մսամթերք արտադրող «Գալստյաններ հայր և որդի» ընկերությունն արտադրության ընթացքում օգտագործում է և տեղական, և Բրազիլիայից ներկրված միս: Բնական և արհես-տական բաղանքներն ու համեմունքները հիմնականում ներկրվում են ար-տասահմանից: Լցոնած արտադրանքի եփման, ծխեցման և սառեցման պրոցեսներն իրականացվում են ար-տասահմանյան ժամանակակից սար-քավորումներով:

«Գալստյաններ հայր և որդի» ըն-կերությունը տարեցտարի ընդլայ-նում է արտադրական տարածքներն ու բարձրացնում արտադրանքի որա-կը: Մակնշումը հայերեն է, պարունա-կում է մթերքի անվանումը, ընկերության ապրանքային նշանը, զտաքաշը, չերմային վիճակը, բաղադրությունը, սննդային և էներգետիկ արժեքը, սննդային հավելումները, այդ թվում բուրավետիչները, պիտանիության ժամկետը, պահման պայմանները և այլն:

Ծնկերությունը շուկայում ներկա-յանում է մոտ 30 արտադրատեսակով, այդ թվում՝ եփած և ապխտած երշիկներ, նրբերշիկներ, սարդելկա, բաս-տուրմա, սուզուխ, եփած և ապխտած վետչինա, ապխտած ֆիլե և այլն:



Արևի մասնիկ. նարինջ

Մշտապես արևի ու ջերմության հետ ասոցացվող այս պտուղն ախորժալի տեսք, համ ու բույր ունի, նաև մի շաբթ օգտակար ու վնասակար հատկանիշներ:

Նարինջը պարունակում է ցինկ, նատրիում, ֆոսֆոր, կալիում, մագնիում և այլն: Այն ամինաթթուների և հակածոխիդանտների արժեքավոր աղբյուր է, հարուստ է սպիտակուցներով, ձարպով, ածխաջրերով: Մեկ նարինջն ապահովում է օրգանիզմին անհրաժեշտ վիտամինի օրվա չափաբաժինը:

Օգուտները

- իջեցնում է արյան ճնշումը,
- բարելավում է սիրտ-անորթային համակարգի աշխատանքը,
- լավացնում է արյան որակը, մաքրում տոքսիններից,
- ամրացնում է իմունային, կարգավորում նյարդային համակարգի աշխատանքը,
- իջեցնում է խոլեստերոլի մակարդակը, ամրացնում ոսկորներն ու ատամները,
- խթանում է ուղեղի աշխատանքը,
- մաշկն առաձգական է դարձնում,
- համարվում է էներգիայի աղբյուր:

Վնասները

Որքան էլ այս մրգի տեսքն ախորժալի է, բույրը՝ անուշ, միևնույն է ունի նաև հակացուցումներ, որոնք անտեսել չի կարելի:

1. Թթվային միջավայրի վնասակար ազդեցություն ատամների էնալի վրա: Անգամ մի փոքր կտորից կամ մի քանի կուս հյութից փոփոխվում է թթ ցուցանիշը՝ հանգեցնելով բերանի թթվայնության մակարդակի բարձրացման և լուրջ սպառնալիք դառնալով բերանի խոռոչի համար: Առավել վտանգավոր են գործարանային արտադրության հյութերը, որոնք հարստացված են շաքարով: Դիետոլոգները խորհուրդ են տալիս նարնջի հյութը խմել ձողիկով, իսկ հնարավորության դեպքում դրանից հետո ջրով ողողել բերանը:
2. Օրգանիզմի պատասխան արձագանքը: Եթե մեկին կարող է միայն հաճույք պատճառել առավելույան քամած թարմ հյութը, ապա մյուսը պիտի խիստ գգուշանա գաստրիտի հնարավոր զարգացումից:

3. Անհամատեղելիություն ալկոհոլի հետ: Եթեմն գերազույն հաճույք պատճառող նարնջի կոկտեյլը կարող է իսկական գլխացավանք դառնալ սարդի համար, քանի որ այս դեպքում վնասակառությունը կրկնապատկվում է: Ի դեպ, գրեթե նույն բանը կարելի է ասել նաև ցիտրուսային այլ մրգերի համար:

Որն ընտրել և ինչպես պահել

Նարինջ աճեցնողներն ու մատակարարները ջանք չեն խնայում, որ այն սպառողին հասնի փայլուն կեղևով ու թարմ տեսքով: Սովորաբար նարինջը քաղում են ոչ լոիվ հասունացած, պատում մեղրամոնվով, որը ճնշում է սմերի ակտիվությունը: Սա, իհարկե, վտանգավոր չէ և պատահաբար բերանն անցնելու դեպքում չի վնասի:

Ընտրելիս կարևոր պայման է կեղևի ամբողջական լինելը: Բանն այն է, որ նարնջի կեղևի փոսիկները շատ հարմար են միջատներին ծվաղրելու համար, ինչի հետևանքով կեղևը փոքր-ինչ մգանում է:

Առանց որևէ հատուկ մեթոդ կիրառելու նարինջը հնարավոր է պահել մեկ շաբաթ: Պահպանման առավել երկար ժամկետ ապահովելու համար պետք է ապահովել հատուկ պայմաններ ու խոնավություն: Օրինակ՝ մինչև հինգ ամիս պահել կարելի է 5°C -ի և 80-85 % խոնավության պայմաններում:

Ցանկալի է պահեստավորել մրգերի համար նախատեսված սառնարանի խցիկում՝ թղթով առանձին-առանձին փաթեթավորելուց հետո:



Աշխատանքային տարվա ավարտը սովորաբար նշանավորվում է կորպորատիվ միջոցառումներով, որոնց բնորոշ են տոնական բարձր տրամադրությունը, շքեղ հարդարանքն ու ամանորյա հյուրասիրությունը:

Տոնական միջոցառման անհարմարություններից խուսափելու համար հարկավոր է.

- Ալկոհոլից օգտվել չափավոր:** Ալկոհոլի չարաշահումը հարված է հասցնում ոչ միայն առողջությանը, այլև վարկանիշին: Պետք է խուսափել քաղցած խմելուց և ալկոհոլային տարբեր խմիչքները խառնելուց:
- Ուտել չափավոր:** Դատկապես ֆուրշերների ժամանակ լիր ափսեն ծեռքին պտտվելն այնքան էլ գեղեցիկ չէ: Այստեղ նպատակը փոխադարձ շփումն է և ոչ թե անհազ սնվելը:
- Շատ չխոսել:** Բազմանարդ միջոցառումները հիմնալի հնարավորություն են շփվելու այն մարդկանց հետ, որոնց հետ զրուցել աշխատանքային օրվա ընթացքում գրեթե չի հաջողվում: Սա չի նշանակում, որ շրջապատին կարելի է ծանրաբեռնել անձնական կամ սոցիալական խնդիրներ քննարկելով:



- Քիչ բողոքել:** Դավատացեք, որ ուրախ տոնախմբությունն ամենահարմար տեղը չէ բողոքելու աշխատավայր հասցնող տրանսպորտից կամ աշխատանքային ոչ բավարար պայմաններից: Եթե դուք տվյալ կոլեկտիվի անդամ եք, ուրեմն կա դրանում ինչ-որ գնահատելի բան: Շեղեք խոսակցությունը հենց այդ ուղղությամբ:
- Վայելել տոնը:** Գտեք հնարավորություն հետաձգելու մնացած բոլոր գործերը: Այս հավաքը միայն մի քանի րոպեով ներկայություն ապահովելու համար չէ: Գնահատեք տոնական ամեն վայրկյանը:
- Ունենալ ծիշտ հանդերձանք:** Ամանորյա միջոցառումները, իհարկե, աչքի են ընկնում գունային բազմազանությամբ ու փայլով, սակայն գործընկերային միջոցառումն այն տեղը չէ, որտեղ պետք է ներկայանալ լայն դեկուլտեով կամ շողշղողուն կոստյումներով: Պարզապես պետք է ծշտել միջոցառման անցկացման վայրը, տեղեկանալ գործող կամ չգործող դրես-կոդի մասին ու հագնվել դրան համապատասխան: Լավագույն տարբերակը հարմար ու թեթև հագուստն է:



Մի փոքր այլ է տանը կազմակերպված միջոցառումը, որի դեպքում.

1. Հյուրերին տեղեկացնել պետք է նախապես (կարծ հաղորդագրությամբ, զանգով կամ բանավոր), որպեսզի նրանք հասցնեն նախապատրաստվել: Ի դեպ, անհարմարությունից խուսափելու համար պլանները փոխվելու դեպքում տեղեկացնել պարտավոր է երկու կողմն էլ:

2. Չի կարելի հյուր գնալ պայմանավորված ժամից ավելի շուտ, քան 15 րոպե: Ննարավոր է, որ տանտերերը դեռ կիսատ գործեր ունեն:

3. 8անկանի է ուրախացնել հյուրերին հաճելի ճպերներով:

4. Դարձավոր է մի կողմն բողնել հեռախոսը, շփվել սեղանակիցների հետ՝ պահպանելով էրիկետի բոլոր նորմերը:



ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՈՆ. ԱՄԱՆՈՐ

Տոնական իրարանցում, նվերներ, զարդարվող եղևնի, գույնզգույն հանդերձանք. մեկ բառով՝ Ամանոր:

Ամանորի գիշերը հրաշքի սպասում է: Միայն թե հրաշքն ինքն իրեն չի գալիս: Նախապատրաստվեք տոնին, ընտրեք զարդեր ու հանդերձանք, հավատացեք գիշերվա հերիարժին: Եվ եթե մի կողմում անվերջ գնումներն ու հոգնությունն են, ապա մյուսում հրաշքի սպասումն է, որ գալիս է մանկությունից ու իր մասին հիշեցնում հատկապես Ամանորի գիշերը:

Տոնական տրամադրություն

Հավատացեք տոնի հրաշքին: Ազատվեք անպետք իրերից ու զարդարեք տունը՝ ամեն օր մի փոքր բան ավելացնելով զարդարանքին: Արեք դա ձեզ համար, մի պայմանավորեք զարդարանքը երեխաներով: Հազնվեք այնպես, ինչպես ուզում եք և ինչպես հարմար է: Դիմավորեք տոնը մտերիմների ու ամենամոտ հարազատների ընկերակցությամբ:

Տոնածառ

Բնական կինի այն, թե արհեստական, տանտերեղի ընտրությունն է: Որքան էլ գերադասելի է այն շողշողություն խաղալիքներով ու պայծառ լուսավորված տեսնելը, առավել կարևոր է անվտանգությունը: Հազիվ տեղաշարժվող կամ առաջին քայլերն անող փոքրիկին դժվար թե հնարավոր լինի հասկացնել, թե ինչու են փշերը կամ վառվող լույսերը վտանգավոր: Հետևաբար անհրաժեշտ է եղնին տեղադրել երեխաների համար անհասանելի տեղում կամ էլ պետք է ընտրել հնարավորինս անվտանգ զարդարանքներ՝ փափուկ, չկոտրվող խաղալիքներ, կոնֆետներ և այլն:

Սեղանի մոտ

Եթե ընտանիքում երեխաներ կան, ապա մի մոռացեք մանկական սեճառեսակների մասին: Սա անհրաժեշտ է երեխային տարբեր մարտողական խնդիրներից ազատելու համար, մանավանդ որ տոնական ուտեստները մատուցվում են մի քանի օր շարունակ և մի քանի անգամ տաքացնելուց հետո, ինչը կարող է լուրջ վտանգել առողջությունը, ուստի խորհուրդ է տրվում տաքացնել միայն տվյալ պահին անհրաժեշտ չափաբաժնով:

Հնարավորինս հարմարավետ, մասնավորապես՝ աղոնուկից հեռու սենյակում պետք է ապահովել նաև երեխաների առողջ քունը:

Նվերներ

Առաջին անհրաժեշտության այնպիսի իրերը, ինչպիսիք են հագուստը, կոշիկը կամ հիգիենայի պարագաները, դժվար թե երեխայի համար հաձեխ անակնկալ լինեն: Հոգեբաններն առաջարկում են փոքրիկներին մատուցել տարիքային առանձնահատկություններին համապատասխան խաղալիքներ, որոնք կարելի է քանդել ու հավաքել, դասավորել ու վերադասավորել, նաև գրքեր, որոնք կարելի է մշտապես թերթել ու վերնթերցել՝ ամեն անգամ մի նոր քան հայտնարերելով:



2019-ը ԴԵՂԻՆ ՎԱՐԱՉԻ ՀԵՏ

(05.02.2019 - 24.01.2020)



2019-ը խաղաղ հարաբերությունների, բարեկամության և ստեղծագործական ներշնչանքի տարի է: Այն խոստանում է փոփոխություններ, մարդկային հարաբերություններում ներդաշնակություն, տարածայնությունների հարթում:

Վարազն աշքի է ընկնում բարությամբ, արդարանտությամբ ու համառությամբ: Նրա համար չեն անլուծելի խնդիրներն ու հուսահատությունը: Նա ունակ է փոփոխություններ կատարելու ոչ միայն պետական համակարգում, այլև յուրաքանչյուրի կյանքում: Լավատես Վարազն անկեղծորեն հոգ է տանում շրջապատի մարդկանց բարեկեցության ու երջանիկ կյանքի համար:

2019-ը ֆինանսական, աշխատանքային և սիրային առաջնային տարի է: Լավատեսություն ու դրական էներգիա խոստանում է բացվող յուրաքանչյուր առավոտ:

Տարին իր հետ բերում է նաև ֆինանսական կայունություն, ինչը չի նշանակում, որ գումարները հենց այնպես կթափվեն երկնքից: Հարկավոր է համառորեն աշխատել: Եվ որովհետև դրամական խնայողությունները Վարազի համար չեն, խորհուրդ է տրվում խուսափել պարտքերից ու գումարի վատնումից:





ԽՈՅՑ: Սեր կարող է ծնվել ցանկացած պահի, հարկավոր է միայն ուշադիր լինել շրջապատի նկատմամբ: Աստղերը խորհուրդ են տալս անսալ բանականության, նոր միայն սրտի ձայնին:

Աշխատանքում հնարավոր են առաջխաղացումներ, նոր եկամուտներ:

Ցանկալի է հետևել առողջությանը և կարգավորել սննդակարգը: Ոչ մի դեպքում չի կարելի անտեսել հանգիստը:



ՑՈՒՀ: Նարկավոր է լրջորեն մոտենալ այն ամենին, ինչը կապված է սիրային հարաբերությունների հետ: Ժամանակն է ընտանիքի ու երեխաների մասին մտածելու:

Վարազը խոստանում է Ցուկին պարզեցնել թափած ցանկացած քանդի համար, ու որոշ ժամանակ անց հետևում կմնան բոլոր մրցակիցները:



ԵՐԿՎՈՐՅԱԿ: ճիշտ ժամանակն է միայնակ կյանքին հրաժեշտ տալու, միայն թե կարևոր քայլից առաջ հարկավոր է երկար ժամը ու թերեւ անել:

2019-ին լուրջ խնդիրներ չեն սպասվում, բայց սա չի նշանակում, որ կարելի է ծուլանալ:

Հետևել առողջությանը պետք է ամեն տարի, բայց Վարազը հատկապես հուշում է թողնել ծիսելն ու սնվել կանոնավոր: Դրաժարվեք գիշերային ժամերին քաղցր հագեցնելուց:



ԽԵՑԳԵՏԻՒՆ: 2019-ին կարծես հուսալի հարաբերություններ չեն ուրվագծվում: Հետևեք ներքին ձայնին, քանի որ հարազատ հոգու ամեն քայլափոխի չես հանդիպի:

Աշխատանքում հնարավոր է առաջ-

խաղացում, ինչը հնարավորություն կատարվի գումար կրտսակելու ճանապարհորդության կամ նոր բնակարանի համար:

Ուշադրությունից դուրս թողնել չի կարելի նաև կենացն ու տնտեսական հարցերը:



ԱՌՅՈՒԹ: Լուսավոր ու արևային շրջան է սիրելիի հետ միավորվելու համար, սակայն ներդաշնակության հնարավոր է հասնել առաջին հերթին ներքին եւ-ի հետ հաշու լինելով: Առողջությանը նշտապես հետևելու ու

հատկապես սպորտով զբաղվելով կատեն հետազայում հնարավոր մի շարք գլխացավանքներից: Ֆինանսական կայունությունն ապահովված կլինի խելամիտ ծախսեր անելու դեպքում միայն: Վճարեք միայն ամենաանհրաժեշտի համար:



ԿՈՒՅՑ: Իդեալ փնտրելու ճանապարհին դժվար թե գտնվի կյանքի հսկական ընկեր: Սթափ նայեք ծեր շուրջ՝ գտնելու համար ծեր միակ ուղեկցին: Ֆինանսական տարրում Վարազը հուշում է զսպել մեծ ցանկությունները՝

գնալով միայն իրական նպատակների հետևից: Տարին նպաստավոր է կրթության ու մասնագիտական վերապարաստման համար:



ԿՇԵՌԵ: Վարազը խորհուրդ է տալս սիրային հարցերում նախաձեռնող լինել: Միայն այս դեպքում հարսանիքը չի ուշանա: Իսկ արդեն ընտանիք կազմանմաների համար ժամանակը պատեհ է ընտանիքը երեխաներով համալրելու համար: Միայն համար ջամքերը կարող են հասցնել այդքան սպասված աշխատանքային բարձունքին:



ԿԱՐԻԲ: Եթեց այս տարի կարող է հանդիպել այն միակը, որն առաջին վայրկյանից կգրավի հմայքով, վարքով ու կրթվածությամբ: Միայն թե պետք է հեռու մնալ խանդու երկրպագուներից: Նրանք, մեղմ ասած, կրունավորեն ծեր կյանքը: Վարազը խորհուրդ է տալս կոփել օրգանիզմը՝ լինել լողավազանում, զբաղվել ֆիտնեսով ու յոգայով: 2019-ը հարմար շրջան է հին գաղափարները կյանքի կոչելու, լեզուներ սովորելու և բիզնեսով զբաղվելու համար:



ԱՊԵՂԱՎՈՐ: Ծանոթությունների ու երկրպագուների պակաս չի զարգվի, միայն թե արժանի ուղեկցին գտնելը է դժվար: 2019-ը դրա լավագույն ժամանակաշրջանն է: Ի դեպ, ընտանելիան հարաբերությունները Վարազի տարրում խոստանում են լինել ավելի քան ներդաշնակ, բայց երջանկության ակնթարթներին անգամ չպետք է աչքաթող արվի առողջությունը:



ԱՅԾԵՂԶՅՈՒՐ: Ժամանակն է անձնական կյանքին պատասխանատվությամբ վերաբերվելու: Եթեացեք բոլոր անլուրը ու անպատասխանատու մտերիմներից, որոնք արժանի չեն ծեր ուշադրությանը: Մի կողմ թողեք համակարգչն ու գրունեք, վազեք, մարզվեք առավոտյան թարմ օդին: 2019-ը խոստանում է անսպասելի եկամուտներ շահումների կամ աշխատանքի դիմաց վարձատրության ձևով:



ՋՐՅՈՒՄ: Վարազը հուշում է ծենքից բար չըրջնել ճակատագրի բարեհաճությունը: Բավական է ուշադիր ու նրանկատ լինել, և անսահման երցանկությունն ապահովված է: 2019-ին առողջությունը Զրիոսին չի անհնարինական է, բայց սմնդակարգին, ինչ խոսք, հետևել պետք է: Նախընտրելի են ծովամթեքով ու մսամթեքով ու տեսատները: Հունիս-հուլիս ամիսները մեծ եկամուտ են խոստանում: Մի քիչ համարձակություն, և հնարավոր է սկիզբ դնել մեծ բիզնեսի: Ի դեպ, ընտանիքը կարող է համարվել այնքան սպասված երեխայով:



ԶԿՆԵՐ: Մեծ է հավանականությունը հատկապես այս տարի հանդիպելու կյանքի ուղեկցին: Միայն թե պետք է ծանալ չիհասթափեցնել նրան: Դեղին Վարազը խոստանում է, որ 2019-ին միայնակ Ձկներ չեն լինի: Տարին ապահովագրում է գրիպից, մրսածությունից: Փոխարենը հնարավոր են դեպքեսիաներ, այն էլ ամենաանհրաժեշտի համար: Վարազի աշխատանքային կամ կարևոր այլ խնդիրներ լուծելիս: Բայց այս ամենը կարելի է հաղթահարել լավ տրամադրությամբ, առավոտյան վագրով կամ յոգայով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.....	2
ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.....	4
ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ	6
ԲԱՐԻ ՍԱՍԱՐԱՑԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	8
ՍԱՆՖՈՒԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	10
ԶԱՆԱԽ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.....	12
ԱԹԵՆք ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.....	14
ԵՐԵՎԱՆԻ ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԵՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ.....	16
ՑԱՐԻՑԻՆՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.....	18
ԵՅ-Ի-ԶԻ ՍԵՐՎԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	20
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ,	
ԹԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	25
ԱՐԵՎԻ ՄԱՍՏԻԿ. ՆԱՐԻՆՅ .	31
ՏՈՒԱԿԱՆ ԵԹԻԿԵՏ	32
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՈՆ. ԱՄԱՆՈՐ	33
ՀՈՐՈՍԿՈՊ 2019	34

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
Թեժ գիծ՝ (010) 24-92-04
E-mail: info@armconsumer.am;
nationalconsumerassociation@yahoo.com
URL:<http://www.armconsumer.am>

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 2 մամուկ
Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԵՅ ԵՄ
տպագրատանը
Բաժանվում է անվճար
Գրանցման վկայականը՝ 2215
Հղումը ՍՊԱՌՈՂ-ին պարտադիր է



“Ե-Ի-ԶԻ-ՍԵՐՎԻՍ” Ընկերությունը շնորհավորում է բոլորին

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Յուրաքանչյուր Ամանոր նոր մեկնարկի սկիզբ է ազդարարում,

ցանկանում ենք, որ այդ մեկնարկը բոլորի համար լինի

հաջողակ և խոստումնալից:

Ինչպես նաև հորդորում ենք լինել ուշադիր գաղի օգտագործման

ժամանակ և պահպանել անվտանգության կանոնները:

ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱԾԽԻՔԸ Է

2019

Դաստիարակություն՝ ՀՀ, 0021, ք. Երևան, Ադոնցի 10

Հեռախոս՝ +374 10 209460

Էլ. հասցե՝ aeg@aegservice.am

Կայք՝ www.aegservice.am



www.armconsumer.am

